«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

	Հեքիաթը
ԹԵՄԱ	
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու
ՀԵՂԻՆԱԿ	Հարեյան Հասմիկ
ՄԱՐԶ	Արագածոտնի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հնաբերդի Ե. Պետրոսյանի անվան մ/դ

Բովանդակություն

1. Ներածություն..... . 2

2. ՀԵՔԻԱԹՆ ԻԲՐԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՐՎԵՍՏԻ ԺԱՆՐ. 5

3. ՀԵՔԻԱԹ ՀՅՈՒՍԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

ԳՈՐԾԸՆԹԱՑԸ..... 16

4. ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ. 17

5. ԴԱՍԻ ՊԼԱՆ. 23

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. 25

7.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ..... 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ ժողովրդական բանարվեստի ամենատարածված ժանրերից մեկը՝ հեքիաթը, մշտապես եղել է կրտսեր դպրոցականի դաստիարակության կարևոր խթանիչներից: Հեքիաթի նպատակային ուսումնասիրությունը հատկապես մայրենիի դասաժամերին նպաստում է դպրոցականի անհատականության, մտածողության զարգացմանն ու ձևավորմանը, օգնում նրան կյանքի շատ երևույթներ հասկանալու, ուսուցչի օժանդակությամբ նրա ենթաշերտերի մեջ ներթափանցելու, հերոսների գործողությունները և քայլերը վերլուծելու, գեղեցիկը, բարին, ազնիվը ճանաչելու և գնահատելու, դրանց մասին դատողություններ անելու, պարզ վերլուծություններ կատարելու:

Ըստ հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշչի մայրենիի ծրագրով որոշակի պահանջներ են առաջադրված հեքիաթի ուսումնասիրման վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են հեքիաթի ոչ միայն ժանրային առանձնահատկությունների, տեսակների տարբերակման, այլև խոր ու բազմակողմանի ուսումնասիրության, տեքստային աշխատանքների յուրացման, ստեղծագործական կարողությունների զարգացման ու ձևավորման համար:

Հետազոտության արդիականությունը

Մայրենիի դասագրքերում բացառիկ տեղ ունի հեքիաթը, որը դպրոցականների սիրելի ժանրերից է և բոլոր ժամանակներում մեծ դեր է ունեցել աշակերտների արժեքային համակարգի ձևավորման գործում: Այսօր էլ հեքիաթի՝ նոր մեթոդներով համակողմանի յուրացումը մեծացնում է նրա դաստիարակչական, ուսուցողական, ճանաչողական նշանակությունը, խթանում դպրոցականի երևակայության զարգացումն ու ստեղծագործական կարողությունների ձևավորումը:

Հետազոտության նպատակը

Աշխատանքի նպատակը մայրենիի դասագրքերում զետեղված հեքիաթների՝ դպրոցականների դաստիարակության, աշխատասիրության, մտածողության, բարոյական արժեքների ձևավորման, զարգացման վրա ներգործության

բացահայտումն է և հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորմանը նպաստող մեթոդական քայլաշարի համակարգումը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն,

2. մատնանշել հեքիաթների անմիջական ազդեցությունը աշակերտների երևակայության զարգացման և հեքիաթաստեղծման կարողության ձևավորման վրա,
3. հիմնավորել կրտսեր դպրոցականների անհատականության ձևավորման գործում հեքիաթների բացառիկ նշանակությունը,
4. կատարել հեքիաթաստեղծման կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ և ստուգել դրանց արդյունավետությունը նշված գործընթացում:

Հետազոտության օբյեկտը

Հետազոտության օբյեկտը մայրենիի դասագործընթացն է՝ դպրոցականների հեքիաթաստեղծման կարողությունների համատեքստում:

Հետազոտության առարկան

Հետազոտության առարկան դպրոցականների հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորման մեթոդական համալիրն է մայրենիի դասագրքերում զետեղված հեքիաթների միջոցով:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը

Հետազոտության արդյունքում բացահայտված օրինաչափությունները, կիրառված մեթոդների վերլուծությունները լրացնում են մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի բնագավառում առկա գիտելիքները դպրոցականի հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորման թեմայի շրջանակներում:

ՀԵՔԻԱԹՆ ԻԲՐԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՐՎԵՍՏԻ ԺԱՆՐ

Հեքիաթի ժանրային առանձնահատկությունները

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին և ամենատարածված ստեղծագործություններից են, դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ և խոր լավատեսությամբ:

Մայրենիի դասագրքերում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ: Ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել Ղ. Աղայանը, Հ Թումանյանը և ուրիշներ, որոնց մշակած հեքիաթները մեր դասագրքերի զարդն են:

Դասագրքերում հանդիպում են նաև օտար հեքիաթներ, որոնք նույնպես անհրաժեշտություն են՝ այլ ժողովուրդների կյանքին, կենցաղին, մտածողության եղանակին ու ստեղծագործություններին ծանոթանալու համար:

Հեքիաթները ստեղծվել են մարդկային հասարակարգի մանկության շրջանում, երբ մարդն ի վիճակի չէր թափանցելու շրջապատի բնական և հասարակական երևույթների էության մեջ, ըմբռնելու դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերը: Հենց դրա հետևանքով էլ հեքիաթները շատ պարզ, դյուրահաս և հաճելի են երեխաների համար, նրանք ոչ միայն սիրով լսում կամ կարդում են դրանք, այլև կրկնակի և եռակի անգամ վերընթերցում: Չկա մարդ, որ հեքիաթ չսիրի:

Հեքիաթները բարի ու գեղեցիկ ավարտ ունեցող իրական կամ երևակայական բնույթի մտացածին պատմություններ են, որտեղ արտահայտված են մարդկանց երազանքներն ու ազնիվ ցանկությունները:

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենասիրված ու ամենատարածված ստեղծագործություններից են:

Բանահյուսական բոլոր ժանրերի, այդ թվում հեքիաթների ստեղծողն ու պահպանողը ժողովուրդն է: Մարդկությանը հմայել են արդարությունը պաշտպանող և չարը հալածող հեքիաթային խիզախները: Հեքիաթներն իրենց հերոսական ու մարդասիրական ոգով, առօրյա կենսափորձից բխող առողջ բարոյախոսության և խորիմաստ փիլիսոփայությամբ գրավել ու գրավում են բոլոր տարիքի

ընթերցողներին, առավել ևս մանուկներին: Թումանյանը հեքիաթների մասին ասել է, որ դրանք ամենաիմաստուն գրվածքներն են, քանի որ դրանցմեջ խորհրդանշական ձևով արտահայտ- ված են հավերժական գաղափարներ: Իսկապես, ամեն հեքիաթ բարձր գաղափարների ու մարդկային հարաբերությունների արտահայտություն է: Հեքիաթներում հերոսների բնավորության գծերը մեկ առ մեկ չեն հիշվում, պարզապես ասվում է՝ չար ու բարի:

Հեքիաթի մեջ մարդիկ և դեպքերը պատկերվում են չափազանցված կամ այլաբանորեն, հաճախ էլ հրաշապատում գծերով:

Հեքիաթների մեծ մասն արձակ է: Բայց պատահում են նաև չափածո հեքիաթներ: Օրինակ՝ Հ. Թումանյանի <<Հազարան բլբուլը>>, «Գառնիկ ախպերը»:

Հեքիաթը, որպես գրական տեսակ, պատկանում է էպիկական սեռին: Հեքիաթները պատմվում են փոխանցվելով բերնից բերան, մի ժողովրդից մյուսին. նույն բովանդակությամբ հեքիաթը տեսնում ենք տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ: Հեքիաթն ունի գրական տեսակի իր կայուն հատկանիշները: Այն հաճախ սկսվում է<< Լինում է, չի լինում>>, <<Կար, չկար>>, <<Ժուկով ժամանակով>> բառերով: Այս պայմանական սկիզբը առկա է շատ ժողովուրդների մոտ:

Հեքիաթում իր երևակայությամբ մարդը հաղթում է ժամանակին ու տարածությանը: Ժամանակը հեքիաթում կարող է կանգնել կամ թռչել տիեզերական արագությամբ. հեքիաթի որոշ հերոսներ ապրում են շատ-շատ երկար, չեն մեռնում, նրանք կարող են մնալ միշտ երիտասարդ, մեռնել և վերականդանանալ, ծերանալ ու երիտասարդանալ, տգեղանալ և գեղեցկանալ:

Բացի կայուն սկզբից, հեքիաթն ունենում է բարի ավարտ. վերջում բարին միշտ հաղթում է, իսկ չարը՝ պատժվում: Հեքիաթների մեծ մասում երկնքից ընկնում է երեք խնձոր՝ մեկը պատմողին, մյուսները լսողներին:

Ժողովրդական հեքիաթները մշակվել են տարբեր ժողովուրդների դասական գրողների կողմից: Ա. Ս. Պուշկինը ուսումնասիրել ու մշակել է ռուսական բազմաթիվ հեքիաթներ: Ժողովրդական հեքիաթների հանդեպ անսահման սեր է ունեցել Հ. Թումանյանը: Նրա դուստրը՝ Ն. Թումանյանը, իր հուշերում գրում է հոր խոսքերը.

<<Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ… հարուստ ու շքեղ աշխարհ է: Հեքաթը ամենաբարձր ստեղծագործությունն է. Նույնիսկ հանճարները հեքիաթ չեն

կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում>>:

Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ բուսակենդանական, հրաշապատում և իրապատում:

Իրապատում հեքիաթները լինում են՝ կենցաղային, հերոսական, սոցիալական բնույթի և այլն: Այս բոլորի հիմքն էլ մարդկային կյանքն է՝ բազմապիսի փոխհարաբերություններով:

Մայրենիի դասագրքերում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ. ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ

են եղել՝ Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, և ուրիշներ, որոնց մշակած հեքիաթները մեր դասագրքերի զարդն են: 1

Հեքիաթում իրականն ու երևակայականը հանդես են գալիս միաձուլված : Հրաշապատում հեքիաթները, լինելով նախնադարյան մարդու ստեղծագործություններ, վառ երևակայության, հոգիների, կախարդական աշխարհի և առհասարակ գերբնական երևույթների

հետ կապված պարզ պատմություններ են, որտեղ հեքիաթի հերոսներին օգնում կամ խանգարում են թռչող գորգն ու գավազանը,

ցախավելը, չար կախարդներն ու բարի փերիները:

Կախարդական հեքիաթների հիմքում ընկած է չարի ու բարու պայքարը, որն ավարտվում է բարու հաղթանակով, և ընթերցողի մեջ առաջանում է հավատ չար ուժերի կործանման անխուսափելության նկատմամբ: Օրինակ՝ <<Կախարդուհին >>/ Շառլ Պերո/, <<Ոսկի քաղաքը>> / Հ. Թումանյան/ և այլն:

Բուսակենդանական հեքիաթների բնորոշ գծերից են կենդանիների և բույսերի անձնավորումը, երբ նրանց վերագրվում են մարդկային բնավորության գծեր: Բուսակենդանական հեքիաթի կառուցվածքը պարզ է. այստեղ բացակայում են կախարդական երևույթներն ու առարկաները: Հեքիաթի հիմնական հերոսները կենդանիներն ու բույսերն են: Նրանցից յուրաքանչյուրը պատկերվում է իրեն հատուկ գծերով: Օրինակ՝ աղվեսը խորահամնկ է, նապաստակը՝ վախկոտ, գայլը՝ ագահ:

Հեքիաթը ներկայացնում է կենդանու ոչ միայն տվյալ հատկանիշը, այլև չարի ու վատի կործանումը : Օրինակ՝ <<Ուլիկը>> հեքիաթում մայր այծը իր սրած պոզերով պատռում է գայլի փորը և ազատում իր ուլիկին: Բուսակենդանական են օրինակ,

---

1 Գյուլամիրյան Ջ., «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա» Երևան 2015 - էջ 180

<<Ճամփորդները>> /Հ.Թումանյան/, <<Նապաստակն ու ոզնին>> /Գրիմ եղբայրներ/:

Կյանքի մանրուքների մասին չէ, որ ժողովուրդը հորինում է հեքիաթ. ամեն մի

հեքիաթի մեջ առաջ են քաշվում սոցիալական խոշոր հարցեր: Բայց այդ սոցիալական խնդիրներն այնքան պարզեցված ձևով են ներկայացվում, որ հեքիաթը երեխաներին սոցիալական կյանքին ծանոթացնելու լավագույն միջոցն է դառնում:

Ժողովրդական հեքիաթներում ընդգծված է ժողովուրդների միասնության գաղափարը: Բազմաթիվ հեքիաթներ կան , որոնցում դրական հերոսը հաղթանակի է հասնում այլ ազգերի ներկայացուցիչների օժանդակության շնորհիվ, շատ հեքիաթներում դրական հերոսը սիրահարվում է այլ ազգի պատկանող աղջկան և բազմաթիվ դժվարություններ հաղթահարելու գնով իր երազն իրականություն դարձնում: Օրենքը թշնամանք է սահմանել ժողովուրդների միջև, ժողովուրդն օրենքին դեմ է գնացել, աչքը չի հեռացրել եղբայրության կամուրջից:2

Ժողովուրդը բանահյուսությունը ստեղծել է՝ գիտակցելով նրա դերն ու նշանակությունը հասարակական կյանքում, սերունդների դաստիարակության գործում:

Ժողովրադական բանահյուսությունը մարդկության ամբողջ պատմության ընթացքում ստեղծված մշակույթի ծաղիկն է. դա հասարակական այն երևույթներից է, որ իր գերակշռող մասով ընդունելի է մեզ համար, համահունչ է մեր ժամանակի հետ:

Ժողովուրդը դեմ է եղել շահագործման ամեն մի ձևի և իր բանահյուսության մեջ մերժել է այն բոլոր հանգամանքները, որոնք իրենց հետ բերում են անհավասարություններ և շահագործում: Ժողովուրդը ի մի է հավաքել շահագործման բոլոր ձևերը , շահագործող բոլոր ուժերը՝ հեքիաթներում ստեղծելով մի միասնական բացասական կերպար՝ չարի կերպարը: Հակառակ այդ կերպարին՝ նա ստեղծել է նաև բարու կերպարը, որը մարդկային բոլոր դրական գծերի միագումարն է:

Ժողովուրդը բազմաթիվ հեքիաթներ է հորինել ընտանեկան փոխահարաբերությունների, ծնողների ու երեխաների փոխադարձ պարտականությունների մասին:

Ընտանիքը հասարակական կյանքում ամենակարևոր դերն ունի: Սերունդների դաստիարակության գործում ընտանիքը այն առաջին օղակն է, որով սկսվում է դաստիարակության ամբողջ շղթան: Այս հանգամանքը ճիշտ ըմբռնելով՝ բազմաթիվ

2 Դոլուխանյան Ա. , Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե. , Զանգակ, 2008:

հեքիաթներում գովաբանվել են համերաշխ ընտանիքը, ծնողներին լսող զավակները և զավակի նկատմամաբ հոգատարություն ցուցաբերող ծնողները: 3

Ժողովուրդը դատապարտում է ոչ միայն այն ծնողներին , որոնք դաժան են վարվում իրենց զավակների հետ, այլև զավակներին, որոնք նույնպիսի վերաբերմունք են ցուցաբերում դեպի ծնողները: Ժողովուրդն արհամարհում է քենն ու վրիժառությունը, նրա սիրելի հերոսը պետք է լինի խիզախ ու մեծահոգի, թույլերին օգնի: Հեքիաթներում քննադատվում են այն ծնողները, որոնք երես են տալիս երեխաներին, կատարում են նրանց բոլոր քմահաճույքները:

ժողովուրդը չի էլ ցանկանում, որ վերջանա ծնողական սերը. թող անսպառ լինի այդ սերը, բայց իրեն դրսևորի այնպես, որ բարիքի ակունք

լինելու փոխարեն, չարիքի ակունք չդառնա:

Ժողովրդի պատկերացմամբ չի կարելի ձեռք բարձրացնել ոչ մի ժողովրդի հայրենիքի վրա:

Մերունդներին այս ոգով դաստիարակելով՝ ժողովուրդը նրանց չի վարժեցնում վախկոտության: Ուրիշ ժողովուրդներին ոչնչացնելն ու թալանելը, ժողովրդի ասելով, նամարդություն է : Իսկական հերոսի կոչումն է իր բազուկը ծառայեցնել հայրենիքին.

ժողովրդական հեքիաթի դրական հերոսը շատ առիթներով է շփվում այլ ազգերի ներկայացուցիչների հետ և գերակշռող մասով ստանում նրանց օժանդակությունն ու պաշտպանությունը:

Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, համոզմունքների ու զգացմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը: Հեքիաթը միաժամանակ բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Մայրենիի դասագրքերում հիմնականում զետեղված են իրապատում և բուսակենդական հեքիաթներ: Հեքիաթների ուսումնասիրումն ունի երկու հիմնական փուլ՝ բովանդակության ընկալում և երևակայական կողմի բացահայտում: Սրանք երկուսն էլ խիստ կարևոր են նյութի յուրացման և դրանից բխող կրթական ու

3 Դոլուխանյան Ա. , Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե. , Զանգակ, 2008

դաստիարակչական նպատակների

համար: Հեքիաթների ուսումնասիրությունն այնպես պետք է իրականացնել, որ իրականն ու երևակայականը թե՛ իրենց փոխադարձ միասնության մեջ և թե՛

առանձին-առանձին հասնեն երեխաների գիտակցությանը: Նախ պետք է պարզաբանել բովանդակությունը, ինչպես պատմվածքինը, անցկացնել նախապատրաստական

զրույց,սովորեցնել կարդալ, անծանոթ բառերը բացատրել, հեքիաթի բովանդակությունը մանրամասն ու համառոտ, փոխելով ու ստեղծագործելով վերատաղրել, գործող անձերին ու նրանց կատարած գործողությունները նկարագրել, հարցերով ամփոփել և այլն: Իսկ հետո անհրաժեշտ է բացահայտել հեքիաթային կամ երևակայական կողմը,

կատարել բարոյախոսական եզրակցություն՝ համապատասխան առած-ասածվացքներ գտնելով և

հեքիաթի հետ կապելով:

Երեխաներին պիտի բացատրել, որ հեքիաթում մի խումբ հերոսներ գործում են ինչ-որ արարքներ՝ իրենց նպատակներին հասնելու մղումով: Իրար դեմ կանգնած են բարի և չար ուժեր: Հեքիաթն անպայման պիտի ավարտվի բարի ուժերի հաղթանակով, որը հեշտությամբ չի տրվում. գլխավոր հերոսներն անցնում են բազում դժվարին փորձությունների միջով, կատարում իրենց առջև դրված անիրականանալի պայմանները, հաղթահարում անհաղթահարելի արգելքներ, և ամենակարևորը, բարին մենակ չի գործում. նրան օգնում են հրաշագործ ուժերը:

Այդպիսով՝ երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև կյանքում, առօրյայում: Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակը հեշտ չի տրվում: Այսինքն՝ հեքիաթը պիտի մեկնաբանվի և իմաստավորվի իր իսկ կյանքի օրինակով:

Երեխայի համար պետք է հեքիաթն կարդալ այնպես, որ այն նրան հաճույք պատճառի, նա մտովի տեսնի այդ պատկերները, հետո նոր կարդալ հեքիաթն ու վերլուծել՝ օգտագործելով դիդակտիկ պարագաներ: Այս դեպքում օգնում են հստակ կառուցված խոսքը, պատմողի հեքիաթային ոճը, ձայնը, որը պետք է տարբերվի պատմվածքն ընթերցելու ձայնից:

Լսելուց հետո երեխաներին պիտի հանձնարարել, որ իրենք վերարտադրեն հեքիաթի բովանդակությունը: Հեքիաթը վերարտադրելիս պետք է հասնել նրան, որ երեխաները հարազատ մնան նրա լեզվին ու ոճին, հաճախ պատմեն հենց այն

բարբառով, որով շարադրված է հեքիաթը, գործածեն հերոսների խոսքերը, ժողովրդի բառն ու բանը: Անշուշտ, այդ դեպքում պիտի բացատրվեն անծանոթ բառերը, կամ երեխաներն իրենք պետք է ասեն հեքիաթում գործածված բառերի և արտահայտությունների գրական համարժեքները:

Երեխաներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմելը: Առավել ևս օգտակար է հեքիաթին շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայության թռիչքին: Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է գործածել նաև ուսուցչի կամ աշակերտների <<կազմած>> նկարներով պլանը: Սա պատմելու կարողության ձևավորման առաջին փուլն է: Հեքիաթի բովանդակության վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով,

դերերով, մրցութային և այլ եղանակներով:

Երեխաների համար հանձնարարելի կարելի է համարել հեքիաթների ուսումնասիրման պատմողական և հորինողական ձևերը, որոնք հետքրքրություն կառաջացնեն հեքիաթների ուսումնասիրության մեջ:

Ուսուցչի կողմից՝ պետք է հանձնարարվի լուռ ընթերցել, հետո պատմել գեղարվեստական պատմումի և արտահայտչական միջոցների լայն օգտագործմամբ: Այս դեպքում երեխաները ոչ միայն լավ են յուրացնում բովանդակությունը, այլև ընդօրինակում են ուսուցչի պատմելաձևը, խոսքի շեշտարդությունն ու ձայնի հնչերանգը:

Հեքիաթի ուսումնասիրման հորինողական ձևը ստեղծագործական մեթոդ է և ավելի լայն կիրառություն ունի կրտսեր տարիքի երեխաների ուսուցման գործընթացում, երբ երեխային հնարավորություն է տրվում յուրովի վերարտադրելու հեքիաթի բովանդակությունը, փոփոխություններ մտցնելու դեպքերի զարգացման մեջ՝ հավատարիմ մնալով հեքիաթի ընդհանուր ոգուն: Միշտ չէ, որ պետք է պատրաստի հեքիաթներ տանք երեխաներին, որպեսզի նրանք վերարտադրեն այն պասիվ կերպով. Երբեմն կարելի է հանձնարարել նույն թեմայով հեքիաթներ հորինել, որը զարգացնում է երևակայությունը և մղում ստեղծագործելու:

Երեխաների մտահորիզոնն ու երևակայությունը զարգացնելու համար կարևոր են նաև հեքիաթների բեմականացումները: Բեմականացումից առաջ պետք է կատարել

բովանդակության և գաղափարի վերլուծություն, հերոսների բնավորությունների առանձնահատկությունների քննարկում , ընտրովի և դերերով ընթերցանություն: Այս ամենից հետո նոր կարելի է անցնել բեմականացմանը:

Բեմականացումների ժամանակ երեխան սովորում է ոչ միայն խոսք կառուցել, այլև նոր բարոյական հատկանիշներ է ձեռք բերում, ճիշտ պատկերացումներ ունենում տարբեր երևույթների, առարկաների, մարդկանց, բույսերի ու կենդանիների մասին: 4

Հեքիաթի ուսումնասիրում կարելի է անցկացնել նաև խաղային ձևերով: Օրինակ՝

Հեքիաթի բեմականացում

ա/ Ընտրել այնպիսի հեքիաթ, որի բեմականցմանը մասնակցի որքան հնարավոր է շատ երեխա,

բ/ Կատարել դերերի ճիշտ բաշխում,

գ/ Որևէ մեկին դեր չհասնելու դեպքում նրան ներառել հագուստի կամ դեկորների ձևավորման գործընթացում:

Հեքիաթաբուժության այս ձևը կնպաստի թիմային աշխատանքի արդյունավետության , երեխաների միջանձնային հարաբերությունների ձևավորում: Հեքիաթի հորինում

Կարելի է երեխաներին հանձնարարել անավարտ հեքիաթներ և առաջարկել դրանք շարունակել և ավարտին հասցնել: Կամ՝ ուսուցիչն առաջարկում է հեքիաթի սկիզբը, իսկ աշակերտներից յուրաքանչյուրը հեքիաթի շուրջ հորինում է մի քանի նախադասություն:

Կարելի է նաև հորինել նոր հեքիաթ՝ հիմք ընդունելով հեքիաթի հենակետային բառերը: Միայն ճիշտ ընտրված և ճիշտ ուսումնասիրված հեքիաթների միջոցով է հնարավոր երեխաներին փոխանցել այն ամենը, ինչը պետք է նրանց ինքնահաստատման և զարգացման համար, օգնել ինքնավստահություն ձեռք բերել, հաղթահարել բարդությունները, դիմագրավել կյանքի դժվարությունները և վերջապես դրական հատկություններ ձևավորել, որն էլ նրանց առաջին քայլն է դեպի կյանք:5

Կարելի է նաև հեքիաթը ձայնագրել տարբեր ձայներով: Տեքստի շուրջ աշակերտների ակտիվ ու ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու տեսանկյունից շատ արդյունավետ է նաև հեքիաթի որևէ դրվագի վերարտադրում

---

4 Խարազյան Ռ., Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա, Ե, 2016:

5 Վասիլ Հարությունյան, Հեքիաթների դաստիարակչական դերը. . .

նկարի միջոցով, երբ երեխաները մտովի վերապրում են հեքիաթի բովանդակությունը:

Հեքիաթի ուսուցման հիմնական խնդիրներն են՝ հեքիաթի դերի ու նշանակության ճանաչում, սովորողների բարոյական որակների ձևավորում, հեքիաթի գեղարվեստական առանձնահատկությունների ընկալում: Ուսուցման գործընթացի ուղղվածությունը՝ մտագրոհ, հեքիաթ բառով, հեքիաթի լուռ և բարձրաձայն ընթերցում, բնագրային աշխատանք՝ բառերի բացատրություն , ամփոփ հատվածների առանձնացում և վերնագրում, բովանդակության վերարտադրում, կերպարների բնութագրում, եզրահանգում:

Հեքիաթը երեխայից պահանջում է յուրահատուկ որակներ՝ բառերի պատկերային զգացողություն, ստեղծագործական մտածողություն, հերոսների վարքի դրդապատճառների ընկալում, ապրումակցում և այլն: Այս բնութագրիչներն ընդհանուր առմամբ ենթադրում են հատուկ գեղագիտական ընկալում, որը ձևավորվում է հատկապես հեքիաթի ուսուցման միջոցով: Հետևաբար հեքիաթների վերլուծության ժամանակ ուսուցչի խնդիրն է՝ օգնել սովորողին հասկանալու հեքիաթի հատկանիշները: Օրինակ, հեքիաթի ընթերցման ժամանակ ուսուցիչն առաջադրում է գծել հեքիաթի հերոսի ճամփորդության երթուղին կամ էլ առաջադրվում է նույն հեքիաթը պատմել տարբեր սովորողների կողմից: Շատ կարևոր է նաև սովորեցնել երեխային պատմել հեքիաթի դիպաշարը: Նպատակահարմար է, օրինակ , որ հեքիաթի բեմականացման ժամանակ երեխան ինքն ընտրի այն հերոսին, ում դերը պետք է ստանձնի: Այսպես մեծանում է ապրումակցումը:6

Գեղագիտական դաստիարակության իմաստով հեքիաթի արդյունավետ ուսուցման համար մեծ նշանակություն ունի հեքիաթի պատկերազարդումների դիտումը: Այն օգնում է երեխային հասկանալ և հիշել կարդացածը: Հեքիաթների շատ պատկերազարդումներ հնարավորություն են տալիս պատկերացնել այնպիսի երևույթներ ու առարկաներ, որոնք երեխան չի կարող տեսնել անմիջականորեն:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս առավել լավ ներկայացնել հեքիաթը: Հնարավոր է ոչ միայն հեքիաթի գրքեր

6 Ի. Վաչկովը իր «Հեքիաթաբուժություն . ինքնագիտակցության զարգացումը հեքիաթի միջոցով»

ստեղծել մատիտի, ջրաներկի, թղթի օգնությամբ, այլև այդպիսի գրքեր կարելի է ստեղծել այլև յդպիսի հեքիաթներ կարելի է ստեղծել ինֆորմատիկայի ուսուցչի օգնությամբ համակարգչի միջոցով:

Հեքիաթի միջոցով ոչ միայն կարելի է ձևավորել ու զարգացնել երեխաների երևակայությունը, այլև օգնել հատուկ կարիքներով երեխաների հարաբերությունների կարգավորմանը: Այդ երեխաներին օգնելու մեթոդներից մեկն էլ հեքիաթաբուժությունն է:

Հեքիաթաբուժությունը հեքիաթն օգտագործում է անձի ստեղծագործական ունակությունների, շրջապատող աշխարհի հետ փոխազդեցության միջոցների կատարելագործման, ուսուցման, հոգեշտկման նպատակներով: Այն փոխըմբռնման միջոց է դառնում մարդկանց միջև, թույլ է տալիս զարգացնել ինքնագիտակցությունը, երևակայությունը, մտածողությունը, օգնում է երեխային ճանաչել աշխարհը, ապահովում է ինչպես ինքնահաղորդակցումը, այնպես էլ հաղորդակցումն ուրիշների հետ:

Հեքիաթաբուժությանը նպաստում է հեքիաթի հիմքում ընկած այլաբանությունը, որն իրական աշխարհի և առաջին հերթին երեխայի չբացահայտված ներքին աշխարհի համար կախարդական հայելի է: 7 Հեքիաթաբուժությամբ զբաղվող շատ հետազոտողներ պարզել են, որ

երեխաները հեքիաթներ լսելիս իրենց պատկերացնում են հեքիաթային հերոսների փոխարեն և աստիճանաբար սկսում են հասկանալ՝ ինչ է նշանակում բարի, քանի որ իրական կյանքում և մարդկանց հետ փոխհարաբերություններում ամրապնդվում են բարոյական հասկացություններ, որոնք արտահայտված են հերոսների կերպարներում: Եվ, ի վերջո, զարգանում է նրանց երևակայությունը:

Դա բացատրվում է նրանով, որ բոլոր հեքիաթների վերջում չարը միշտ պատժվում է: Ուժեղ և քաջ մարտիկների, բարի փերիների, քաջ զինվորների կերպարները, որոնք հեքիաթներում դժվար պահերին միշտ հասնում են օգնության, հենց բարին են, որը երեխայի կողմից ավելի հեշտ է ընկալվում, քանի որ այն ներկայացված է հեքիաթային հերոսների կատարած գործերով:

7 Ի. Վաչկովը իր «Հեքիաթաբուժություն . ինքնագիտակցության զարգացումը հեքիաթի միջոցով»

Հեքիաթաբուժությունը կիրառվում է ագրեսիվ, ներամփոփ, վախկոտ, բարդություններ և այլ խնդիրներ ունեցող, անհանգիստ երեխաների հետ աշխատանքի ժամանակ: Հեքիաթի աշխարհ մտնելով՝ երեխան թափանցում է իր հոգու խորքերը, ուր խառնաշփոթ է տիրում զանազան հույզերի ու զգացողությունների պատճառով: Հեքիաթներն ունակ են վերացնելու երեխայի ներաշխարհի խառնաշփոթությունը:

Հեքիաթում հնարավոր է այն ամենը, ինչը հնարավոր չէ իրական կյանքում: Հենց այս հանգամանքն էլ երեխային հնարավորություն է տալիս հասկանալու, ընդունելու սեփական անձն ու շրջապատող աշխարհն այնպիսին, ինչպիսին կա, վստահ լինելու իր ուժերին և փոխվելու ցանկալի ուղղությամբ: Յուրաքանչյուր հեքիաթ բարու հաղթանակն է չարի դեմ , որն էլ հենց գրավում է երեխայի Հեքիաթները նպաստում են ոչ միայն երեխայի լեզվական , հաղորդակցական, տրամաբանական և ստեղծագործական կարողությունների, այլև սոցիալական հմտությունների զարգացմանը: Շատ մանկավարժների տարիների փորձը ցույց է տվել, որ մյուս գրական ժանրերի համեմատ հեքիաթներն առավել քան արժեքավոր են սովորողների մտածական ու երևակայական կարողությունների, ինչպես նաև բարոյական ու հոգևոր արժեքների ձևավորման առումով:

Հեքիաթների, ինչպես նաև առածների և ասացվածների ուսումնասիրումը նպաստում է նաև երեխաների արժեհամակարգի ձևավորմանը՝ հարգել մեծերին, օգնել ծերերին , լինել աշխատասեր, ընկերասեր, պատվախնդիր, սուտ չխոսել, լինել համարձակ և այլն:

Նման բովանդակությամբ հեքիաթներից կարելի է առանձնացնել Հ. Թումանյանի «Անբան Հուռին» , « Անխելք մարդը», «Սուտասանը», «Խելոքն ու հիմարը» և այլն:

Ներկայումս մանկավարժները երեխային կրթելիս պետք է հաշվի առնեն , որ նոր սերունդը, որը մեծացել է բջջային հեռախոսների և համակարգիչների հետ շփվելով, պահանջում է մտկա տեսողական խթան և արագ դինամիկ ուսումնական գործընթաց: Ներկայիս դպրոցականը սովոր է բազմաթիվ համակարգչային խաղերի և հեռախոսատեսային գունեղ տեսահոլովակների: Նրանք նման ձևով էլ ընկալում են շրջապատող իրականությունը:

Հիմք ընդունելով հեքիաթի բովանդակային բաղադրիչները՝ անհրաժեշտ է նաև երեխաների ուշադրությունը հրավիրել բանալի բառերի և արտահայտությունների վրա, քանի որ դրանց միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել կերպարների և գործող անձանց հոգեվիճակը, նրանց արարքների դրդապատճառները, հերոսի ինչպիսին լինելը, հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ7:

ՀԵՔԻԱԹ ՀՅՈՒՍԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
Հայտորոշիչ թեստի արդյունքների վերլուծություն

Սովորողների հեքիաթ հյուսելու կարողությունը ստուգելու նպատակով կազմեցինք հայտորոշիչ թեստ(տե՛ս հավելված 1՝ շլրացված տարբերակ), ինչը հնարավորություն տվեց պարզելու, թե նախքան նպատակաուղղված աշխատանքները որքանո՛վ էր զարգացած աշակերտների հեքիաթ հյուսելու կարողությունը, և ինչպիսի՛ փոփոխությունների կարող է այն ենթարկվել որոշակի աշխատանքից հետո:

Ըստ չափորոշչային պահանջների՝ (աշակերտը պետք է կարողանա իրավիճակին համապատասխան ոչ ծավալուն բանավոր տեքստ կազմել, տրված թեմայով պատմողական և նկարագրական բնույթի խոսք կառուցել, հեքիաթներ, բանաստեղծություններ հորինելու փորձեր կատարել), կազմեցինք թեստ(տե՛ս հավելված 2՝ լրացված տարբերակ):

Պարզեցինք աշակերտների հեքիաթ հյուսելու կարողության զարգացվածության մակարդակը նախքան աշխատանքներ կատարելը՝ ըստ մեր կազմած չափանիշների.

Աղյուսակ 1

Բարձր	Գնահատվում են այն դեպքում, երբ կարողանում են ոչ միայն պատասխանել թեստի բոլոր հարցերին, այլև մեկնաբանում և հիմնավորում են իրենց պատասխանները:
Միջին	Գնահատվում են այն դեպքում, երբ պատասխանում են թեստի բոլոր հարցերին, սակայն չեն կարողանում հիմնավորել այն:
Ցածր	Գնահատվում են այն դեպքում, երբ չեն կարողանում անգամ առանց հիմնավորման պատասխանել թեստի առնվազն 3 հարցի:

Աշխատանքն ավարտելուց հետո արձանագրեցինք հետևյալ արդյունքները.

Տրամագիր 1



Հայտորոշիչ թեստը կատարել ենք հինգերորդ դասարանում՝ 12 աշակերտի շրջանում: Ստորև ներկայացնում ենք հայտորոշիչ թեստի արդյունքները:

Թեստի առաջին՝ «Հիշու՞մ եք՝ ո՛վ է առաջին անգամ ձեզ հեքիաթ պատմել»: հարցին աշակերտների 8%-ը պատասխանել է (1 աշակերտ), որ հայրիկն է պատմել, 59%–ը(7 աշակերտ)՝ մայրիկը, 25%–ը (3 աշակերտ)՝ տատիկը, 8%–ը (7 աշակերտ)՝ պապիկը: Ունեցանք հետևյալ պատկերը.

Տրամագիր 2



Ո՞ր հեքիաթն եք լսել առաջին անգամ:

Աշակերտների 51%-ը կամ 6 աշակերտը պատասխանել է <<Կարմիր գլխարկը>>, 25%(3 աշակերտ) պատասխանել է <<Գնդլիկ բոքոնիկը>>, 8% (1 աշակերտ) պատասխանել է <<Սպիտակաձյունիկը>>, 8% (1 աշակերտ) պատասխանել է <<Պոչատ աղվեսը>>, 8% (1 աշակերտ) պատասխանել է <<Սուտասանը>>: Ունեցանք հետևյալ պատկերը.

Տրամագիր 3



<<Ինչպե՞ս են սկսվում հեքիաթները>> աշակերտների 75%-ը(9 աշակերտ) պատասխանել է <<Լինում է, չի լինում>>, 17%-ը(2 աշակերտ) պատասխանել է <<Կար- չկար>>, 8%-ը(1 աշակերտ) պատասխանել է <<Ժուկով ժամանակով>>: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ երեխաները շատ լավ գիտեն, թե ինչպես են սկսվում հեքիաթները, այսինքն ստեղծագործության սկիզբը կարդալով կարող են գլխի ընկնել հեքիաթ է, թե ոչ:

Տրամագիր 4



<<Ինչպե՞ս են ավարտվում հեքիաթները>> հարցին աշակերտների 100%-ը(12 աշակերտ) պատասխանել է երկնքից երեք խնձոր ընկավ: Հատկանշական է այն, որ բոլոր աշակերտները գիտեին, թե ինչպես են ավարտվում հեքիաթները:

Ունեցանք հետևյալ պատկերը.

Տրամագիր 5



<< Ծանոթ են արդյոք ձեզ հետևյալ հեքիաթները>> հարցին աշակերտների 92%-ը(11 աշակերտ) պատասխանել է <<այո>>, 8%-ը(1 աշակերտ) պատասխանել է <<ոչ>>: Այստեղի կարող ենք եզրակացնել, որ աշակերտների մեծ մասը կարդում է հայկական հեքիաթներ : Հատկանշական է այն, որ աշակերտներից միայն մեկ աշակերտ է պատասխանել, որ ծանոթ չեն հեքիաթները:

Ունեցանք հետևյալ պատկերը.

Տրամագիր 5



<<Ո՞վ է <<Խոսող ձուկը>> հեքիաթի հեղինակը>> հարցին աշակերտների 17%-ը(2 աշակերտ) պատասխանել է Ղազարոս Աղայան, 66 %-ը(8 աշակերտ) պատասխանել է Հովհաննես Թումանյան, 17%-ը(2 աշակերտ) պատասխանել է Խնկո Ապեր: Կարևոր է այն, որ աշակերտները որևէ հեքիաթ կարդալիս ուշադրություն են դարձնում նաև հեղինակներին: Ունեցանք հետևյալ պատկերը.



<<Ո՞ր հեքիաթից է հետևյալ հատվածը>> հարցին աշակերտների 25%-ը(3 աշակերտ) պատասխանել է <<Անխելք մարդը>>, 17 %-ը(2 աշակերտ) պատասխանել է<<Ոսկե ձկիկը>>, 50%-ը(6 աշակերտ) պատասխանել է <<Սուտասանը>>, 8%-ը(1 աշակերտ) պատասխանել է <<Ձախորդ Փանոսը>>: Ունեցանք հետևյալ պատկերը.

Տրամագիր 7



<< Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է <<Անբան Հուռին>> հարցին աշակերտների 25%-ը (3 աշակերտ) պատասխանել է պատմվածք, 75 %-ը (9 աշակերտ) պատասխանել է հեքիաթ: Աշակերտների կեսից ավելին ճիշտ է պատասխանել հարցին: Հատկանշական է, որ աշակերտներ կային, ովքեր չգիտեին <<Անբան Հուռին>> ստեղծագործության ժանրը: Ունեցանք հետևյալ պատկերը.

Տրամագիր 9



Հայտորոշիչ թեստի արդյունքներից պարզ դարձավ, որ աշակերտների մեծ մասը բավականին լավ տեղյակ է հեքիաթի ժանրին, գիտի տարբեր հեքիաթներ և այդ հեքիաթների հեղինակներին:

Թեստի արդյունքների վերլուծությունից հետո նախաձեռնեցինք և իրականացրինք մի շարք աշխատանքներ, որոնց միջոցով իրականացվող դասի փուլերում կզարգանա սովորողների հեքիաթ հյուսելու կարողությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կատարած հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

- Երեխաների համար հեքիաթ ընթերցելիս պետք է հեքիաթի ներքին հույզերն ու զգացմունքայնությունը հասցնել այնպիսի ընթերցանությամբ, որը նրանց մեջ սկզբից ևեթ առաջացնի համապատասխան ապրումներ և հուզական վիճակ:
- Ցանկացած առարկայի ուսուցում, որպեսզի արդյունավետ լինի, պետք է կազմակերպել խաղի, հեքիաթի ձևով՝ սովորեցնել այնպես, ինչպես նա ընկալում է աշխարհը՝ գունագեղ , հստակ ու մատչելի:
- հեքիաթաստեղծման կարողության ձևավորման համար պետք է սովորողներին հանձնարարել շատ հեքիաթներ կարդալ: Պետք է կարողանան վերարտադրել կարդացած հեքիաթները իրենց բառերով, տարբերեն հեքիաթի տեսակները, տարբերեն հեքիաթում իրականն ու անիրականը, հասկանան հեքիաթի բարոյախրատական դաստիարակության իմաստը, քննարկեն, վերլուծեն, հայտնեն իրենց կարծիքները հեքիաթի հերոսների վերաբերյալ: Հետևաբար կունենան սեփական կարծիք, մոտեցում, բառապաշար, մտքեր, ինչը կխթանի, որ իրենց հեքիաթը հորինեն:
- Որպեսզի աշակերտների մոտ հեքիաթի գաղափարը ավելի տպավորվի, կարծում եմ , որ նրանք հաճախ պետք է այցելեն տիկնիկային թատրոն, մասնակցնեն հեքիաթների բեմականացրած միջոցառումների, իրենք էլ լինեն մասնակից և խաղան հեքիաթային հերոսների դերեր:
- Կարևոր է՝ ուսուցիչը դասը հետաքրքիր և արդյունավետ անցկացնի՝ կիրառելով ուսուցման փոխներգործուն մեթոդներ, որոնք աշակերտին կդարձնեն դասի անմիջական մասնակիցը և հնարավորություն կընձեռեն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
- Հեքիաթը արդյունավետ միջոց է ոչ միայն երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման, այլև մտքի ճկունության, երևակայության զարգացման գործում: Օրինակ՝ Հ. Թումանյանի «Քաջ Նազարը», Ղ. Աղայանի

«Անահիտը» հեքիաթները անավարտ են և հնարավորություն են ընձեռում աշակերտներին ազատություն տալ իրենց մտքերին՝ հեքիաթաստեղծման

կարողության ձևավորման համար:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հպարտ լինի այն գիտակցումով , որ կարող է կրթել ու դաստիարակել ինքնուրույն մտածող, կարդացածին քննադատորեն մոտեցող, բարի, արվեստասեր, սեփական հույզերը, ապրումներն ու մտքերը մայրենի լեզվով գեղեցիկ, անկաշկանդ արտահայտող, գործուն, աշխատասեր անհատներ:

ԴԱՍԱՊԼԱՆ

V դասարան Առարկա – Մայրենի

Դասի թեմա – Հ. Թումանյան. «Խոսող ձուկը» (հեքիաթ) Դասի տիպը – Համակցված

Մեթոդներ, հնարներ – Հույզերի դատարկում, դաս-ներկայացում, խմբային աշխատանք, հեքիաթային դիպաշարի կատարում

Օգտագործվող նյութեր – Մայրենի 5 (I մաս, հեղինակներ՝ Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան)

Դասի նպատակ – զարգացնեն

ա) միտքը տարբեր նախադասություններով արտահայտելու, կարդացածը վերարտադրելու ունակություն,

բ) հեքիաթի բարոյախրատական իմաստի ընկալում,, գ) բառապաշարի հարստացում,

դ) խմբում աշխատելու, դասընկերներին հանդուրժելու կարողություններ:

Վերջնարդյունքներ – Աշակերտը կկարողանա.

ա) գրագետ խոսքով ներկայացնել հեքիաթը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը,, բ) մասնակցել խմբային խոսք հորինելու գործընթացին,,

գ) հորինել տարաբնույթ նշաններ և միջոցներ ինքնարտահայտվելու համար, դ) դրսևորել ապրումակցում դասընկերների հանդեպ,

ե) ձևավորել իր մեջ հասարակական արժեքներ:

Ուսուցչի ընթացիկ նպատակներ – Դասարանական ընդհանուր աշխատանքների մեջ օգնել թիրախավորված մի քանի աշակերտներին՝ հասկանալու և ճիշտ օգտագործելու համար իրենց ուժեղն թույլ կողմերը, քաջալերել, համբերատարությամբ տրամադրել նրանց դասին:

Նպատակներին հասնելու ռազմավարություն – Փորձել խմբում խթանել ապրումակցումը՝

«Ձեզ դրե՛ք ձեր դիմացինի տեղը» կարգախոսով: Խրախուսել, որ առավել ակտիվները լիարժեքորեն ներգրավեն այս աշակերտներին խմբերի աշխատանքներում:

Ընթացք

Սկիզբ- 10 րոպե

ա) Ծանոթացում դասի նպատակներին և վերջնարդյունքներին:

բ) Խմբային աշխատանքների նախապատրաստում:

գ) Գրատախտակին առկա է ինքնագնահատման սանդղակը:

Ուսումնական նյութը՝ դասագիրք:

Իմաստավորում-25 րոպե

ա) Տեքստ բաժանել մասերի, պլանավորել խաղը՝ կարևորելով գրագետ խոսքը: բ) Օգնել խմբերին շարադրել գրագետ եզրահանգումներ:

գ) Խմբերը հերթով ներկայացնում են հեքիաթը՝ պարտադիր օգտագործելով տեքստում կիրառված բոլոր նոր բառերն ու արտահայտությունները (աշակերտների ուշադրությունը հրավիրվում է այն փաստին, որ դրանք տեքստում գրվում են կարմիրով և կապույտով):

դ) Մեկ անգամ ևս անդրադարձ ենք կատարում վերջնարդյունքներին և բացատրում գնահատման սկզբունքները գրատախտակին առկա սանդղակով:

Ամրապնդում և ամփոփում – 10 րոպե

ա) Ուսուցչի օգնությամբ կատարվում է ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,

բ) Անդրադարձ է կատարվում նոր բառերին, դարձվածքներին և արտահայտություններին – շալակտար, ուռկան, ցամաքած, սաստիկ, տարակուսել, մտածմունք, զարհուրելի, իրիկուն, շվաք, քուրք, տրեխ, պախրա, միտք անել, գլխին գալ, մի դուռ բացվել, աստված ողորմած է, գործ բռնել, հյուրն աստծունն է, լեզուն կապվել, մեռած տեղից ետ գալ, աշխարհով մեկ լինել, բարի լույսը բացվել, ճամփան կտրել:

Հարցեր

7) Ինչպիսի՞ մարդ էր ձկնորսի շալակտարը, բնութագրի՛ր, հիմնավորի՛ր:

8) Ի՞նչ է պատահում շալակտարի հետ:

9) Ի՞նչ պայման են կապում հրեշը և շալակտարը:

10) Քանի՞ տարի են կինն ու շալակտարը անհոգ ապրում:

11) Ի՞նչ է կատարվում 3 տարի հետո:

12) Ո՞վ է օգնում խեղճ մարդուն: Նկարագրի՛ր այդ երիտասարդին:

13) Ի՞նչ է կատարվում գիշերը:

14) Ինչպիսի՞ հարցեր է տալիս հրեշը:

15) Ի՞նչ պատասխաններ է տալիս երիտասարդը:

16) Ի՞նչ է պարզվում հեքիաթի վերջում:

17) Ի՞նչ եզրահանգման եկաք:

Կշռադատում:
Տնային աշխատանք

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կատարած հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

- Երեխաների համար հեքիաթ ընթերցելիս պետք է հեքիաթի ներքին հույզերն ու զգացմունքայնությունը հասցնել այնպիսի ընթերցանությամբ, որը նրանց մեջ սկզբից ևեթ առաջացնի համապատասխան ապրումներ և հուզական վիճակ:
- Ցանկացած առարկայի ուսուցում, որպեսզի արդյունավետ լինի, պետք է կազմակերպել խաղի, հեքիաթի ձևով՝ սովորեցնել այնպես, ինչպես նա ընկալում է աշխարհը՝ գունագեղ , հստակ ու մատչելի:
- հեքիաթաստեղծման կարողության ձևավորման համար պետք է սովորողներին հանձնարարել շատ հեքիաթներ կարդալ: Պետք է կարողանան վերարտադրել կարդացած հեքիաթները իրենց բառերով, տարբերեն հեքիաթի տեսակները, տարբերեն հեքիաթում իրականն ու անիրականը, հասկանան հեքիաթի բարոյախրատական դաստիարակության իմաստը, քննարկեն, վերլուծեն, հայտնեն իրենց կարծիքները հեքիաթի հերոսների վերաբերյալ: Հետևաբար կունենան սեփական կարծիք, մոտեցում, բառապաշար, մտքեր, ինչը կխթանի, որ իրենց հեքիաթը հորինեն:

- Որպեսզի աշակերտների մոտ հեքիաթի գաղափարը ավելի տպավորվի, կարծում եմ , որ նրանք հաճախ պետք է այցելեն տիկնիկային թատրոն, մասնակցնեն հեքիաթների բեմականացրած միջոցառումների, իրենք էլ լինեն մասնակից և խաղան հեքիաթային հերոսների դերեր:
- Կարևոր է՝ ուսուցիչը դասը հետաքրքիր և արդյունավետ անցկացնի՝ կիրառելով ուսուցման փոխներգործուն մեթոդներ,որոնք աշակերտին կդարձնեն դասի անմիջական մասնակիցը և հնարավորություն կընձեռեն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
- Հեքիաթը արդյունավետ միջոց է ոչ միայն երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման, այլև մտքի ճկունության, երևակայության զարգացման

գործում: Օրինակ՝ Հ. Թումանյանի «Քաջ Նազարը», Ղ. Աղայանի «Անահիտը» հեքիաթները անավարտ են և հնարավորություն են ընձեռում աշակերտներին ազատություն տալ իրենց մտքերին՝ հեքիաթաստեղծման կարողության ձևավորման համար:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հպարտ լինի այն գիտակցումով , որ կարող է կրթել ու դաստիարակել ինքնուրույն մտածող, կարդացածին քննադատորեն մոտեցող, բարի, արվեստասեր, սեփական հույզերը, ապրումներն ու մտքերը մայրենի լեզվով գեղեցիկ, անկաշկանդ արտահայտող, գործուն, աշխատասեր անհատներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյումիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա. <<Զանգակ>> հրատ. , 2015:

2. Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու, հ. V, Ե., 1945:

3. Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Ե., 2010:

4. Ղանալանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե., 1945:

5. Ղանալանյան Ա. Տ., Հայ ժողովրդական հեքիաթները (Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1965, N 3:

6. Ջ. Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995: 7

. Տեր-Գրիգորյան Ա. Ե.,Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան , 1980:

8. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 2, «Մանմար», Երևան 2016:

9. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 3, «Մանմար», Երևան 2014:

10. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 4, «Մանմար», Երևան 2016: